ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2017/7Շ

ք. Երևան «22» օգոստոս 2017 թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս.Ամիրխանյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ա. Անդրեասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ա/ճ Մ-2 - Երևան- Գորիս-Մեղրի-Իրանի սահման Կմ 230+500 - Կմ 231+000 հատվածի հիմնանորոգման և ջրահեռացման ապահովման (ՀՀ Սյունիքի մարզի Ծղուկ համայնքի տարածք կմ 180+938 -կմ181+381) աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո: Ա/ճ Մ-2 - Երևան- Գորիս-Մեղրի-Իրանի սահման Կմ 230+500 - Կմ 231+000 հատվածի հիմնանորոգման և ջրահեռացման ապահովման (ՀՀ Սյունիքի մարզի Ծղուկ համայնքի տարածք կմ 180+938-կմ181+381) 2017թ.-ին իրականացվելիք աշխատանքների ավարտման ժամկետ է սահմանվում 30.11.2017թ.:

Ա/ճ Մ-2 - Երևան- Գորիս-Մեղրի-Իրանի սահման Կմ 230+500 - Կմ 231+000 հատվածի հիմնանորոգման և ջրահեռացման ապահովման (ՀՀ Սյունիքի մարզի Ծղուկ համայնքի տարածք կմ 180+938-կմ181+381) մնացած աշխատանքների ավարտման ժամկետ է սահմանվում ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 120 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1 տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 92 280 000 (իննսուներկու միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որից 15 380 000 (տասնհինգ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Ընդ որում 2017թ. իրականացվելիք աշխատանքների գինը կազմում է 39 991 650 (երեսունինը միլիոն ինը հարյուր իննսունմեկ հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ 92280000 ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում,այդ մասով պայմանագիրը կլուծվի (կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել կանխավճար):

5.1.2 Պայմանագրի գնից՝ մինչև ---------- (----------) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ

ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ք. Երևան, Նալբանդյան 28	ք. Սիսիան, Խանջյան 2
Կենտրոնական Գանձապետարան	«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011004786	Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ 09802793
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	

Հավելված թիվ 1
« » 2017թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ա/6 Մ-2 - Երևան- Գորիս-Մեղրի-Իրանի սահման Կմ 230+500 - Կմ 231+000 հատվածի հիմնանորոգման և ջրահեռացման ապահովման (ՀՀ Սյունիքի մարզի Ծղուկ համայնքի տարածք կմ 180+938-կմ181+381) աշխատանքներ
(Ընդհանուր)

ՀՀ դրամ

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
I. Հողային աշխատանքներ					
1	10e-IV կարգի բնահողի մշակում էքսկ, 1մ 3 բարձում , տեղափոխում 1կմ լցակույտ	մ^3	223	1604	357790
2	Նույնը ձեռքի աշխատանքով	մ^3	24.29	7780	188980
3	9դ-V կարգի բնահողի փխրեցում մանր պայթանցքային լիցքերով հմիջ=0,5մ	մ^3	22	4856	106840
4	Նախօրոք փխրեցված 9դ-V կարգի բնահողի տեղափոխում բուլդոզերով մինչև 10մ բարձում էքսկ,1,0մ3,տեղափոխում 1կմ լցակույտ	մ^3	66	2316	152880
5	Նույնը ձեռքի աշխատանքով	մ^3	7.16	13212	94600
6	10e-IV կարգի բնահողի մշակում պահուստում 1մ3 էքսկ,, տեղափոխում 2կմ լիցք (հարթում, ջրում, խտացում)	մ^3	306.87	2496	765800
				1.ընդամենը	*1666890*
II. Կողային առուներ					
1	Կողային առուների իրականացում 10e-IV կարգի բնահողում , բարձում 0,65մ3 էքս, տեղափոխում 1կմ	մ^3	256.5	1644	421730
2	Նույնը ձեռքով	մ^3	28	8116	227260
3	9դ-V կարգի բնահողի փխրեցում մանր պայթանցքային լիցքերով հմիջ=0,5մ	մ^3	8.3	8506	70600
4	Կողային առուների իրականացում նախօրոք փխրեցված 9դ-V կարգի բնահողում , բարձում 0,65մ3 էքս, տեղափոխում 1կմ	մ^3	24.67	2003	49420
5	Նույնը ձեռքի աշխատանքով	մ^3	3	13323	39970
				2.ընդամենը	*808980*

III ճան. Հագուստ					
1	Ճան, հագուստի քանդում էքս, 1,0մ3 շ,տ, բարձում տեղափոխում 1կմ կուտակումով պահուստում	մ^3	86	1545	132870
2	Ճան, հագուստի քանդում բուլդոզերով տեղափոխում մինչև 10մ բարձում էքսկավատորով, տեղափոխում 1կմ կուտակումով պահուստում	մ^3	92.88	1485	137970
3	Նախօրոք կուտակված ճան, հագուստի բարձում պահուստից, տեղափոխում 1կմ լիցք իրականացնելու համար	մ^3	178.88	2072	370610
4	Ճան, հագուստի սառը վերամշակում h=20սմ	մ^2	3821.89	4592	17551080
5	Ներքին շերտի խ/հ ա/բ h=6սմ	մ^2	3821.89	7387	28231470
6	Ծածկի վերին շերտի մ/հ ա/բ h=5սմ	մ^2	3821.89	6596	25209710
				3.ընդամենը	*71633710*
IV. Կողնակներ					
1	Կողնակների ավազա-կոպճային ամրացում h=5սմ 3կմ-ից	մ^3	77.65	2268	176080
				4.ընդամենը	*176080*
V. Երթևեկելի մասի ջրահեռացում					
1	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10սմ	մ^3	32.5	6221	202180
2	Б-2-20 վաքերի տեղադրում	մ^3	49.6	145918	7237510
3	Б-4-20բլոկների տեղադրում	մ^3	0.184	250326	46060
				5.ընդամենը	*7485750*
VI.Ջրահեռացում կողնակից					
1	Բնահողի քանդում ձեռքով կողքի կուտակումով (5,12+3,3)	մ^3	8.42	6072	51130
2	Ավազակոպճային հիմք h=10սմ (միաձույլ բետոն տաշտակի և բարձիկների տակ)	մ^3	0.724	6326	4580
3	Միաձույլ բետոն տաշտակի կառուցում B-15 (2հատ)	մ^3	0.71	122901	87260
4	Միաձույլ բետոն բարձիկների կառուցում B-15 (6հատ)	մ^3	1.08	60926	65800
5	Ուրմնակային ամրան U14A500C	կգ	7.26	937	6800
6	Մետաղական d=0,530/2 կիսախողովակի տեղադրում δ=7մմ (21+23) գծմ	գծմ	44	54992	2419660

7	Կիսախողովակի ջրամեկուսացում 2շերտ տաք բիտումով	գծմ	41	1604	65770
8	Ավազակոպճային հիմք h=10սմ	մ³	2.66	6222	16550
9	Հետադարձ լիցք	մ³	6.12	2082	12740
				6.ընդամենը	*2730290*
VII. Ե/բ 4x3 խողովակի նորոգում					
1	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով կողքի կուտակումով (1,6+4,2)	մ³	5.8	6090	35320
2	Մուտքում գլխադիրի և ուղղորդ թելերի առանցքով անցքերի իրականացում խարիսխների համար	հատ	12	2087	25040
3	Ողողատե խարիսխների պատրաստում և տեղադրում Մ22 AIII l=0,5մ	կգ	17.88	957	17120
4	Անցքերի լրացում էպոքսիդացեմենտային շաղախով ճնշման տակ	մ³	0.003	46667	140
5	Գլխադիրի և ուղղորդ թելերի բարձրացում միաձույլ բետոնով	մ³	3	78813	236440
6	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	մ²	7.5	1301	9760
7	բլոկների ապամոնտաժում և մոնտաժում	մ³	15	40259	603880
8	Հետլիցք ձեռքով	մ³	5.8	2086	12100
				7.ընդամենը	*939800*
VIII. Մոտեցման ճանապարհի կառուցում					
1	10e-IV կարգի բնահողի մշակում բուլդոզերով, տեղափոխում մինչև 10մ, հարթակի կառուցում	մ³	560	127	71130
2	Հարթակի ամրացում ավազակոպիճով (h=15սմ)	մ²	60	778	46680
				8.ընդամենը	*117810*
IX. d=530մմ մետաղական խողովակի տեղադրում (իջատեղերում)					
1	Խողովակի և ջրհորի բնահողի քանդում 0,65մ3 էքսկ, տեղափոխում 1 կմ լցակույտ	մ³	2.85	1663	4740
2	Նույնը ձեռքի աշխատանքով կողքի կուտակումով հատ լիցքի համար	մ³	1.85	6103	11290
3	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10սմ (և ջրհոր 0,1)	մ³	0.325	6400	2080
4	Մետաղական խողովակի d=530մմ, δ=7մմ տեղադրում	գծմ	5	106030	530150

5	Խողովակի ջրամեկուսացում	գծմ	4.7	3213	15100
6	Խճային հիմք h=20սմ (ջրհոր)	մ^3	0.2	5650	1130
7	Մուտքում ջրհորի կառուցում միաձույլ բետոնից B-20	մ^3	0.55	93745	51560
8	Ջրամեկուսացում	մ^2	3.4	1306	4440
9	Հետադարձ լիցք	մ^3	1.85	2092	3870
				9.ընդամենը	***624360***
X. Արգելափակոցներ					
1	Արգելափակոցների ապամոնտաժում հանձնում սեփականատիրոջը	գծմ	80	2264	181100
2	Արգելափակոցների ապամոնտաժում նորոգում և տեղադրում (մետ, սյուն)	գծմ	252	5847	1473380
3	Արգելափակոցների ներկում - թիթեղ - սյուն	մ^2	222.64	1588	353560
		մ^2	90	394	35440
4	Նոր արգելափակոցների տեղադրում	գծմ	153	24398	3732870
5	Ուղղորդ սյունների տեղադրում	հատ	5	16740	83700
				10.ընդամենը	***5860050***
XI. Ճանապարհային նշաններ					
1	Նախազգուշացնող	հատ	5	46146	230730
2	Առավելություն	հատ	1	51120	51120
3	Տեղեկատվության	հատ	1	30680	30680
4	Էրացուցիչ տեղեկատվության	հատ	1	33350	33350
				11.ընդամենը	***345880***
	XII. Գծանշում				
1	Հոծ գիծ 1.1	գծմ	443	117.52	52060
				12.ընդամենը	***52060***
				Ընդհանուր	***92 441 660***

**միավորի արժեքը ներառում է շահույթը և Ա.Ա.Հ.*

Ա/6 Մ-2 - Երևան- Գորիս-Մեղրի-Իրանի սահման Կմ 230+500 - Կմ 231+000 հատվածի հիմնանորոգման և ջրահեռացման ապահովման (ՀՀ Սյունիքի մարզի Ծղուկ համայնքի տարածք կմ 180+938-կմ181+381) աշխատանքներ

(2017 թվական)

ՀՀ դրամ

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4		5
I. Հողային աշխատանքներ					
1	10e-IV կարգի բնահողի մշակում էքսկ, 1մ 3 բարձում , տեղափոխում 1կմ լցակույտ	$մ^3$	223	1604	357790
2	Նույնը ձեռքի աշխատանքով	$մ^3$	24.29	7780	188980
3	9դ-V կարգի բնահողի փխրեցում մանր պայթանցքային լիցքերով հմիջ=0,5մ	$մ^3$	22	4856	106840
4	Նախօրոք փխրեցված 9դ-V կարգի բնահողի տեղափոխում բուլդոզերով մինչև 10մ բարձում էքսկ,1,0մ3,տեղափոխում 1կմ լցակույտ	$մ^3$	66	2316	152880
5	Նույնը ձեռքի աշխատանքով	$մ^3$	7.16	13212	94600
6	10e-IV կարգի բնահողի մշակում պահուստում 1մ3 էքսկ,, տեղափոխում 2կմ լիցք (հարթում, ջրում, խտացում)	$մ^3$	306.87	2496	765800
				1.Ընդամենը	*1666890*
II. Կողային առուներ					
1	Կողային առուների իրականացում 10e-IV կարգի բնահողում , բարձում 0,65մ3 էքս, տեղափոխում 1կմ	$մ^3$	256.5	1644	421730
2	Նույնը ձեռքով	$մ^3$	28	8116	227260
3	9դ-V կարգի բնահողի փխրեցում մանր պայթանցքային լիցքերով հմիջ=0,5մ	$մ^3$	8.3	8506	70600
4	Կողային առուների իրականացում նախօրոք փխրեցված 9դ-V կարգի բնահողում , բարձում 0,65մ3 էքս, տեղափոխում 1կմ	$մ^3$	24.67	2003	49420
5	Նույնը ձեռքի աշխատանքով	$մ^3$	3	13323	39970
				2.Ընդամենը	*808980*
	III Ճան. Հագուստ				
1	Ճան, հագուստի քանդում էքս, 1,0մ3 շ,տ, բարձում տեղափոխում 1կմ կուտակումով պահուստում	$մ^3$	86	1545	132870

2	Ճան, հագուստի քանդում բուլդոզերով տեղափոխում մինչև 10մ բարձում էքսկավատորով, տեղափոխում 1կմ կուտակումով պահուստում	$մ^3$	92.88	1485	137970
3	Նախօրոք կուտակված ճան, հագուստի բարձում պահուստից, տեղափոխում 1կմ լիցք իրականացնելու համար	$մ^3$	178.88	2072	370610
4	Ճան, հագուստի սառը վերամշակում h=20սմ	$մ^2$	1546.86	4590	7100090
5	Ներքին շերտի խ/հ ա/բ h=6սմ	$մ^2$	1546.86	7	11431300
6	Ծածկի վերին շերտի մ/հ ա/բ h=5սմ	$մ^2$	1512.86	6596	9978820
				3.Ընդամենը	***29151660***
IV. Երթևեկելի մասի ջրահեռացում					
1	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10սմ	$մ^3$	21.51	6220	133790
2	Б-2-20 վաքերի տեղադրում	$մ^3$	33.1	145910	4829620
3	Б-4-20բլոկների տեղադրում	$մ^3$	0.184	250326	46060
				4.Ընդամենը	***5009470***
V Ջրահեռացում կողնակից					
1	Բնահողի քանդում ձեռքով կողքի կուտակումով (5,12+3,3)	$մ^3$	8.42	6072	51130
2	Ավազակոպճային հիմք h=10սմ (միաձույլ բետոն տաշտակի և բարձիկների տակ)	$մ^3$	0.724	6326	4580
3	Միաձույլ բետոն տաշտակի կառուցում B-15 (2հատ)	$մ^3$	0.71	122901	87260
4	Միաձույլ բետոն բարձիկների կառուցում B-15 (6հատ)	$մ^3$	1.08	60926	65800
5	Որմնակային ամրան Մ14А500С	կգ	7.26	937	6800
6	Մետաղական d=0,530/2 կիսախողովակի տեղադրում δ=7մմ (21+23) գծմ	գծմ	44	54992	2419660
7	Կիսախողովակի ջրամեկուսացում 2շերտ տաք բիտումով	գծմ	41	1604	65770
8	Ավազակոպճային հիմք h=10սմ	$մ^3$	2.66	6222	16550
9	Հետադարձ լիցք	$մ^3$	6.12	2082	12740
				5.Ընդամենը	***2730290***
VI. d=530մմ մետաղական խողովակի տեղադրում (իջատեղերում)					

1	Խողովակի և ջրհորի բնահողի քանդում 0,65մ3 էքսկ, տեղափոխում 1 կմ լցակույտ	մ^3	2.85	1663	4740
2	Նույնը ձեռքի աշխատանքով կողքի կուտակումով հատ լիցքի համար	մ^3	1.85	6103	11290
3	Ավազակոպճային շերտի տեղադրում h=10սմ (և ջրհոր 0,1)	մ^3	0.325	6400	2080
4	Մետաղական խողովակի d=530մմ, δ=7մմ տեղադրում	գծմ	5	106030	530150
5	Խողովակի ջրամեկուսացում	գծմ	4.7	3213	15100
6	Խճային հիմք h=20սմ (ջրհոր)	մ^3	0.2	5650	1130
7	Մուտքում ջրհորի կառուցում միաձույլ բետոնից B-20	մ^3	0.55	93745	51560
8	Ջրամեկուսացում	մ^2	3.4	1306	4440
9	Հետադարձ լիցք	մ^3	1.85	2092	3870
				6.Ընդամենը	*624360*
				Ընդհանուր	*39 991 650*

**միավորի արժեքը ներառում է շահույթը և Ա.Ա.Հ.*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011004786
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ք. Սիսիան, Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802793

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« » 2017թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Ա/6 Մ-2 - Երևան- Գորիս-Մեղրի-Իրանի սահման Կմ 230+500 - Կմ 231+000 հատվածի հիմնանորոգման և ջրահեռացման ապահովման (ՀՀ Սյունիքի մարզի Ծղուկ համայնքի տարածք կմ 180+938-կմ181+381) հիմնանորոգման աշխատանքներ
(2017թ.)

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
1	Նախապատրաստական աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	20.09.2017
2	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	25.11.2017
3	Հողային աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	30.10.2017
4	Ջրահեռացման իրականացում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	25.10.2017
5	Ճանապարհային պատվածք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	30.10.2017
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**30.11.2017թ.**

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Ա/ճ Մ-2 - Երևան- Գորիս-Մեղրի-Իրանի սահման Կմ 230+500 - Կմ 231+000 հատվածի հիմնանորոգման և ջրահեռացման ապահովման (ՀՀ Սյունիքի մարզի Ծղուկ համայնքի տարածք) ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կատարվելիք հիմնանորոգման աշխատանքներ

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	**ավարտը**
1	Նախապատրաստական աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 15 օրացույցային օր
2	Լաբորատոր փորձարկումներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 120 օրացույցային օր
3	Հողային աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 31 օրացույցային օր
4	Արհեստական կառուցվածքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 40 օրացույցային օր
5	Ջրահեռացման իրականացում	ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 56 օրացույցային օր
6	Ճանապարհային պատվածք	ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 110 օրացույցային օր
7	Ճանապարհի կահավորում	ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 120 օրացույցային օր
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	**ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո**	**ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 120 օրացույցային օր**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011004786
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ք. Սիսիան, Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802793

/ստորագրություն/

Հավելված N 3
« » 2017թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	*45231177/1*	Ա/ճ Մ-2 - Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման Կմ 230+500 - Կմ 231+000 հատվածի հիմնանորոգման և ջրահեռացման ապահովման (ՀՀ Սյունիքի մարզի Ծղուկ համայնքի տարածք) աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	30 000 000	30 000 000	39 991 650	39 991 650	39 991 650	39 991 650

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011004786
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ք. Սիսիան, Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802793

/ստորագրություն/

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «_____»_____ 2017թ.

<<Սիսիանի ԲՈՒԱՏ>> ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Տիգրան Անդրեասյանի (անձնագիր AN0428141,տրվ.03.04.2013թ. 011-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Ա/ճ Մ-2 - Երևան- Գորիս-Մեղրի-Իրանի սահման Կմ 230+500 - Կմ 231+000 հատվածի հիմնանորոգման և ջրահեռացման ապահովման (ՀՀ Սյունիքի մարզի Ծղուկ համայնքի տարածք) աշխատանքները (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2017/7Շ ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ք. Սիսիան, Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802793
Տիգրան Անդրեասյան _____
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և պաշտոնը

Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝«Կոնվերսբանկ» ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 1930011791110100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 09802793

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ ՀՀ տրանսպորտի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565518

10. Շահառուի բանկը՝ ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900005000758

12.Գումարը թվերով և բառերով՝ 9228000 (ինը միլիոն երկու հարյուր քսանութ հազար)

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ Պայմանագրի ապահովում

15.Պայմանագրի ծածկագիրը՝ «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2017/7Շ»

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.S.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.S.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.